

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՐՊԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՓՈՐՁ**

Ա. Ա. ԱՅՐԱՀԱՄՅԱՆ

Բաճախիքական գիտությունների դոկտոր

Լեզվական իրակությունների բովանդակության տլորտում կարող են լինել որոշ համասեռ իմաստներ, որոնք հանդես են դալիս լեզվի տարբեր մակարդակներում՝ ունենալով յուրահատուկ արտահայտություններ: Դրանք միջմակարդակային կամ ընդհանուր կարգեր են: Այդպիսի կարգերի ընդհանրությունը երևան է գալիս համապատասխան իմաստների տարաստիճան համասեռությամբ, իսկ արտահայտության եղանակները կամ ձևերը լինում են ըստ տարբեր մակարդակների ունեցած յուրահատկությունների:

Ժամանակակից հայերենում այդպիսի ընդհանուր կամ միջմակարդակային կարգերից է կերպավորության կարգը, որը վերաբերում է բայ խոսքի մասին: Կերպավորական իմաստները բայի մեջ կարող ան հանդես գալ կամ նրան կարող են ուղեկցել բառակազմական-բառային, ձևակազմական-ձևաբանական և կիրառական-շարահյուսական մակարդակներում: Այդ պատճառով էլ այն դիտում ենք որպես միջմակարդակային կամ ընդհանուր կարգ: Միայն այդքանով է այն ընդհանուր կարգ և ոչ թե նրանով, որ բոլոր դեպքերում ընդհանուր ընդգրկում ունի: Ընդհանրական, առանձին դեպքերում շատ սահմանափակ դրսևորումներ է ունենում:

Ո՞րն է կերպավորության կարգի իմաստային հենարանը: Դա բայով արտահայտվող գործողության կամ եղելության կատարման բնույթն է, ընթացքի նկարագիրը: Այն բոլոր իմաստները, որոնք ծառայում են գործողության (կամ եղելության) իրագործման բնութագրմանը, կերպավորական իմաստներ են: Այդպիսի իմաստներ են կատարյալությունն ու անկատարությունը, տևականությունը, կրկնությունը, բազմապատիկությունը, եղրայնությունը, սկսողականությունը, շարունակականությունը և այլն: Հենց դրանք էլ պետք է ընդգրկվեն կերպավորության բովանդակության մեջ: Հետևաբար դրանց հետ այդ իմաստներն արտահայտող միջոցներն էլ պետք է ներառվեն այդ կարգի մեջ՝ որպես համապատասխան ձևային կողմ: Անշուշտ, կերպավորության կարգի առանցքը կազմում է կերպի քերականական կարգը, որը ձևաբանական բնույթ ունի և ընդհանրապես գիտության մեջ նկարագրվում ու սահմանվում է որպես բայի ձևաբանական կարգ:

Առհասարակ բայական կերպի կարգը լեզուներում ամենալինքնատիպ և թերևս ամենից դժվար ընկալելի կարգն է: Եվ այստեղ լեզուները ցուցաբերում են խիստ բազմազան յուրահատկություններ: Ինչպես նկատված է, որոշ լեզուներ ունեն կերպի առավել զարգացած վարգ, ինչպես՝ սլավոնական լեզուները, սրանց մեջ էլ՝ հատկապես ռուսերենը: Բայց կան լեզուներ էլ, որտեղ այն թույլ է արտահայտված: Եվ, բացի դրանից, տարբեր լեզուներում կարող է տարբեր էություն ունենալ: Այսպես, օրինակ՝ եթե ռուսերենում կեր-

պերր որոշվում են ըստ անկատարության ու կատարյալության (решать, делать, писать, брать—անկատար, решить, сделать, написать, взять—կատարյալ), այսպեւ անգլերենում բայական այդ կարգի հիմքն են համարվում առաջին հերթին ժամանակային ձևերի մեջ դրսևորվող անորոշությունը և շարունակականությունը կամ սեռությունը (indefinite և continuous կոչված ժամանակային ձևերի հակադրությունները)։ Կամ թե չէ կոմի-յուրյաներենի համար ճանաչվում են բաղմադատական, բաշխական, անդրադարձական, նվազական կերպեր¹ և այլն, Հասկանալի է, որ նման պայմաններում կերպի բերականական կարգի բնութագրումը պետք է լինի ըստ յուրաքանչյուր լեզվի ցուցաբերած յուրահատկությունների, ինչ խոսք, հայերենի կերպն էլ պիտի ներկայացվի իր իսկ առանձնահատկությունների հիման վրա։

Ընդհանրապես գիտություն մեջ բայի կերպային իրողությունները նկատված ու բնութագրված են վաղուց, սակայն մեր դարի սկզբներից մասնագետներն սկսեցին տարբերել ու առանձնացնել բուն կերպը (Aspekt) և, այսպես ասած, «գործելաձևը» (Aktionsart)։ Այս հարցում առաջինը եղավ Սիգուրդ Ագրելը, որ 1908 թ. սլավոնական լեզուների (հատկապես լեհերենի) փաստերի հիման վրա սահմանեց «գործելաձևը» որպես գործողության կատարման եղանակի ճշգրտում՝ ի տարբերություն անկատարության (իմպերֆեկտիվության) և կատարյալության (պերֆեկտիվության)², որոնք ներկայացնում են սլավոնական լեզուների անկատար ու կատարյալ կերպերը։

Ժամանակակից ռուսագիտության մեջ բուն կերպի (ВИД) և «գործելաձևի» (способ глагольного действия) հարցում կան մոտեցման որոշ տարբերություններ։ Գրեթե բոլոր մասնագետները նշում են, որ դրանք իրենց նշանակությամբ խիստ մոտ են կանգնած, սահմանակից են։ Սակայն, այդուհանդերձ, կարգերի որոշման մեջ ցուցաբերվում են ոչ միատեսակ ըմբռնումներ։ Մասնագետների մի մասը «գործելաձևերը» դիտում է որպես ենթակերպեր և դրանք արտահայտող համապատասխան բայերը բաշխում է անկատար ու կատարյալ կերպերի միջև³։ Մի մասը որոշակիորեն առանձնացնում է «գործելաձևերը»՝ «способы глагольного действия» անվանումով և նկարագրում առանձին՝ միաժամանակ ընդգծելով, որ դրանք և բուն կերպերը փոխադարձ կերպով խաչաձևվում են⁴։ Մյուս մասն էլ ընդունում է «способ...»-ը ուրույն բառա-բերականական կարգ⁵ և այլն։ Բայց բոլոր դեպքերում չի կարելի անտեսել լեզվական այդ իրողությունների տարաստիճան համասեռությունը բովանդակության ոլորտում։

¹ Տե՛ս Բ. Ա. Серебренников, Категории времени и вида в финно-угорских языках пермской и волжской групп, М., 1960, էջ 86։

² Տե՛ս «Вопросы глагольного вида», М., 1962, էջ 10, 36։

³ Հմտ. «Грамматика русского языка», I, М., 1952, էջ 426—464։ А. М. Филкель и И. М. Баженов, Курс современного русского литературного языка, Киев, 1930, էջ 368—378; Н. С. Валгина и др., Современный русский язык, М., 1964, էջ 222—227, «Современный русский язык», под. ред. проф. Д. Э. Розенталя, М., 1971, էջ 308—311 և այլն։

⁴ Տե՛ս օրինակ, «Грамматика современного русского литературного языка», М., 1970, էջ 346—350։

⁵ Հմտ. «Современный русский язык», под. ред. проф. Е. М. Галкиной-Федорук, М., 1964, էջ 152—153։

Թե ի՞նչ է արված հայերենագիտության մեջ մեր բայական կերպի ուսումնասիրության ուղղությամբ, արժանի է հանգամանալից քննության: Սակայն մենք այստեղ նման քննություն չենք կատարելու, որովհետև տվյալ դեպքում մեր առաջ այլ խնդիր ենք դրել: Մեր խնդիրը չէ նաև բնութագրել ժամանակակից հայերենի բայական կերպը իր բոլոր յուրահատկություններով: Այստեղ պիտի ցուցադրենք ու նկարագրենք ժամանակակից հայերենի բայի ու նրա հետ կապված կերպավորական մի քանի իմաստների վերլուծական դրսևորումները:

Մեր ուսումնասիրությունների ժամանակ նկատել ենք, որ հայերենի բայով արտահայտվող գործողության կատարման բնույթը բնորոշող մի շարք իմաստներ կան՝ արտահայտության բազմազան միջոցներով: Դրանք, իհարկե, տարբեր են թե՛ իրենց վերացարկվածության աստիճանով և թե՛ դրսևորման ձևերով ու միջոցներով: Բայց քանի որ բովանդակության գծով ունեն ընդհանրություններ, բոլորն էլ ուղղված են գործողության կատարման բնութագրման նպատակին, ուստի ներկայանում են լեզվական մի ընդհանուր կարգի մեջ, որը, ինչպես վերը նշեցինք, կերպավորության կարգն⁶ է: Այս ընդհանուր կարգի մեջ բազմազան վերադասարկումներն իրենց արտահայտություններով հաճախ խաչաձևվում են միմյանց հետ ու ստեղծում կերպավորական բավական բարդ ցանց: Կերպավորությունն անվանումը գործածում ենք ի տարբերություն կերպի՝ համապատասխան հասկացությունները տարբերելու համար: Կերպավորությունը ընդհանուր է՝ տարաստիճան վերացարկվածություն ունեցող կերպային բոլոր իմաստների ընդգրկումով, իսկ կերպը ավելի մասնավոր է, ունի ձևաբանական վերացարկվածություն ու արտահայտություն:

Կերպավորության ընդհանրությունը, սակայն, գոյանում է մասնակիությունների ամբողջացումից, ուստի՝ նրա համապատասխան անունով կարող են փոխվել նաև առանձին, մասնավոր կերպիմաստները՝ իրենց որոշակի արտահայտություններով, այդ թվում և վերլուծական դրսևորումներով:

Ժամանակակից գրական հայերենում հետաքրքրական պատկեր ունեն կերպավորության վերլուծական դրսևորումները, որոնք հանդես են գալիս լեզվի տարբեր մակարդակներում:

Սկսենք շարահյուսականից: Մի շարք կերպիմաստներ արտահայտություն են ստանում շարահյուսական հոդի վրա, և նույնպիսի կամ նմանօրինակ իմաստներ լեզվի այլ մակարդակներում ևս կարող են հանդես գալ կամ չգալ:

Նախ պետք է նշենք ժամանակակից հայերենի կերպավորական մի արտահայտության մասին, որը գիտականորեն դիտված ու նկարագրված չէ՝ հատկապես այս տեսանկյունից: Դա մի երևույթ է, որը ըստ համապատասխան իմաստի կարելի է անվանել մեծալեզն կերպավորություն: Արդպես կա-

⁶ Այս մասին 1966 թ. մարտին մենք զեկուցում ենք կազմակերպված համաժողովում: Արդյունքի անվան մասնավորական ինստիտուտի գիտական նստաշրջանում: Զեկուցման հիմնական դրույթները շարադրվում են այս հոդվածում: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ դրանից յոտավորապես մեկ տարի հետո, 1967 թ. «Вопросы языкознания» պարբերականի №-ը համարում լույս տեսած «К проблематике функционально-семантических категорий» հոդվածում (էջ 18—31) Ա. Վ. Իոնդարկոն ռուսերենի համար նշվող գործառական-իմաստաբանական մի քանի կարգերի շարքում ընդունում է аспектальность-ը (կերպավորությունը), որն ընդգրկում է բուն կերպը և զգործնաձևերը: Այնտեղ ուշադրավ շատ դիտողություններ ու մտքեր կան: Սակայն մեր կատարածը բոլորովին անկախ է եղել:

րելի է և որչիւ ալն պատճառով, որ համապատասխան արտահայտութեամբ այդ դեպքում նշվում է գործողութեան՝ իրագործման մոտ լինելը, մերձ լինելը, Ըստ որում կատարման մերձականութեան գաղափարը կարող է լինել գործողութեան սկսման կամ ավարտման իմաստով:

Մերձական կերպավորութեան արտահայտվում է բաղադրյալ ստորոգյալի հատուկ տիպի միջոցով, տրտեղ գործողութեան (կամ եղելութեան) գաղափարն արտահայտող բայը հանդես է գալիս անորոշ դերբայի սեռական հոլովի ձևով (որպես կապի խնդիր), նրան զուգակցվում է վրա կապը, և այդ երկուսը միասին ենթակային են կապվում, համապատասխան իմաստները իբրև հատկանիշ նրան են ստորոգվում հանգույցի միջոցով: Օրինակներ. «Արեգակը մտնելով վրա էր» (Րաֆֆի, ԵԺ, հ. 3, Երևան, 1955—1959, էջ 308): «Դրանցից շատերի առաջ դռնվում էին փոքրիկ ծածկոցներ, ուր նարգիսի նարնջածաղկի հետ փթթում էր մայիսյան վարդ, թեպետ հունիսը վերջանալով վրա էր» (Մուրացան, ԵԺ, հ. 5, Երևան, 1951—1954, էջ 59): «Անձրեն այժմ մաղում էր և, րստ երևելթին, կտրվելու վրա էր» (Նար-Դոս, Ե, հ. 3, Երևան, 1955, էջ 155): «Ներկայացումը սկսվելու վրա էր» (նույն տեղում, էջ 67): «Վահանը... տեսնելով, որ մոխիրը վայր ընկնելու վրա է սիգարը զգուշորեն մոտեցրից մոխրամանին» (նույն տեղում, էջ 95):

Դժվար չէ նկատել, որ այսպիսի կառույցներում հաճախ հանդես են գալիս այնպիսի բայեր, որոնք հենց իրենց բառային իմաստներով սկիզբ կամ ավարտ են նշանակում, ինչպես՝ սկսել (սկսվել), վերջանալ, կտրվել (= դադարել, վերջանալ), ավարտել, սպառվել և այլն: Բայց դա բոլոր դեպքերում պարտադիր չէ: Կարող են լինել և առհասարակ այնպիսի բայեր, որոնք նման իմաստներ չունեն, բայց նրանցով արտահայտվող գործողությունները կարող են որոշվել սկսման կամ ավարտման սահմաններով: Իհարկե, չի կարելի ասել, թե այսպիսի կերպավորութունը բոլոր բայերի համար համատարած է: Ընդգրկման տեսակետից ախ ունի զգալի սահմանափակություն:

Շարահյուսական այսպիսի կառույցների մեջ կերպավորական իմաստն ունի յուրահատուկ վերացարկվածություն: Սակայն չի կարելի ասել, թե բոլոր դեպքերում, երբ անորոշ դերբայի և վրա կապի զուգակցումներ են լինում, անխտիր հանդես է գալիս կերպավորական հիշյալ իմաստը: Կան դեպքեր, երբ այդպիսի զուգակցությունների մեջ նշված իմաստը չի արտահայտվում: Այսպես. «Պառավ Հեղինարը կորիզը երկու թոռների մեջ բաժանելու վրա էր, երբ հանկարծ ներս մտավ Անանը...» (Նար-Դոս, Ե, հ. 1, էջ 70): «Նորատի կինը երեսխայի և դայակի հետ նոր էր վերադարձել զբոսանքից և հագուստը փոխելու վրա էր... երբ աղախինը մտավ և հայտնեց...» (նույն տեղում, էջ 205): Ակնհայտ է, որ ընդգծված օրինակներում մերձական կերպավորութուն չկա: Այդ կառույցներում չի արտահայտվում գործողության սկսման կամ ավարտման մոտ լինելը: Բաժանելու վրա էր նշանակում է «զբաղված էր բաժանելով», «բաժանում էր», փոխելու վրա էր նշանակում է «զբաղված էր փոխելով», «փոխում էր»: Շարահյուսորեն սրանք նույնպես բաղադրյալ ստորոգյալներ են, բայց առանց մերձական կերպիմաստի:

Մերձական կերպավորության կառույցներում երբեմն անորոշ դերբայի սեռական հոլովը զուգակցվում է մոտ կապի հետ: Օրինակ՝ «Հրազենների պաշարը խնայում էին, որը սպառվելու մոտ էր» (Րաֆֆի, Ե, հ. 3, էջ 74): «Տունն էլ արդեն ավարտվելու մոտ էր... հարկերը պատրաստ էին...» (Դ. Դե-

միրճյան, Եժ, հ. 2, Երևան, 1955—1963, էջ 315) և այլն: Ակնբախ է, որ այստեղ նույնպես առկա է մերձական կերպիմաստը: Բայց նկատելի է, որ, այդուհանդերձ, այստեղ համապատասխան գաղափարն արտահայտվում է ավելի բացահայտությամբ ու կոնկրետությամբ, որը գալիս է մտ կապի բառային իմաստից: Այսպիսով, սրանք ևս գտնվելով մերձական կերպավորության շրջանակներում՝ միաժամանակ տառացիորեն չեն նույնանում նախորդների հետ: Եվ այս երկու տիպի ստորոգյալները քերականական նշանակություններով համանիշներ են և ոչ նույնանիշներ:

Վերլուծական կերպավորության մեջ հատուկ տեղ են գրավում գործողության սկիզբը, շարունակությունը (շարունակվելը) ու դադարը համապատասխան իմաստներ ունեցող առանձին բայերի զոսգակցումով նշելու դեպքերը: Սրանք նույնպես ստեղծվում են շարահյուսական մակարդակում՝ հատուկ տեսակի բայական բաղադրյալ ստորոգյալի կազմավորումներով: Երբ ըստ հղորդվող մտքի պահանջ է առաջ գալիս որևէ գործողության սկսվելը, շարունակվելը կամ դադարելը որոշակիորեն նշելու, համապատասխան բայի անորոշ դերբային զուգակցվում են սկսել, շարունակել, դադարել բայերը, որոնք անորոշ դերբայով արտահայտվող գործողությունը վերագրում են ենթակային: Բայց ոչ միայն այդքանը: Ենթակայի հիմնական գործողությունը, այդպիսով, արտահայտվում է անորոշ դերբայի միջոցով, որը անփոփոխ է մընում: Նրա ժամանակի, եղանակի, դեմքի, թվի քերականական նշանակությունները դրսևորվում են զուգակցվող հիշյալ բայերի միջոցով, դրանց գումարվում են նաև սկսման, շարունակման ու դադարման կերպիմաստները, որոնք, պարզ է, գալիս են այդ բայերի բառիմաստներից: Օրինակ՝ «Կարճատև դադարից հետո Միքայելն սկսեց խոսել» (Շիրվանզադե, Եժ, հ. 4, Երևան, 1950—1954, էջ 284): «Պատրիկյանը սուս ու փոս նստած գրասեղանի կողքին շարունակում էր գրել իր հոդվածը...» (Նար-Դոս, Ե, հ. 1, էջ 187): «Իսահակ Մարությանյանը դադարել էր Ալիմյաններին այցելել...» (Շիրվանզադե, Եժ, էջ 320) և այլն:

Առաջին օրինակում սկսեց բառաձևով սկսողական կերպիմաստ է հղորդվել խոսել բային, երկրորդում շարունակում էր բառաձևով շարունակականության կերպիմաստ է տրվել գրել բային, երրորդում դադարել էր բառաձևով նշվել է այցելելու գործողության դադարումը: Սրանք հենց կերպավորություններ են շարահյուսական մակարդակում: Առանձին վերցված, ինքնին խոսել, գրել, այցելել բալերը ադպիսի նշանակություններ չունեն, բայց հղորդվող մտքի պահանջով նախադասության մեջ ստացել են լրացուցիչ կերպով (չենք խոսում քերականական այլևայլ նշանակությունների մասին): Սկսեց խոսել, շարունակում էր գրել, դադարել էր այցելել զուգակցություններում բառիմաստի տեսակետից սկսել, շարունակել, դադարել և խոսել, գրել, այցելել բայերը նույն «թանձրությունը» չունեն: Առաջինների մեջ թեև բառիմաստները լրիվ չեն չքացել, սակայն որոշ չափով դժգունացել են: Եվ

7 Այս և նման այլ տիպերի բայական բաղադրյալ ստորոգյալները առանձնապես լավ են ուսումնասիրված ռուսերենի քերականագիտության մեջ: Հմմտ., օրինակ, «Грамматика русского языка», II, М., 1954, էջ 409—411: Այժմ մենք ունենք նաև ժամանակակից հայերենի նմանօրինակ ստորոգյալների հանգամանակից ուսումնասիրություն: Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Ա, 1958, էջ 139—145:

այդպիսով այդ բայերը ծառայում են հիմնական գործողություններն արտահայտող բայերի քերականական զանազան նշանակությունները լրացուցիչ կերպով արտահայտելուն: Մենք այստեղ չենք խոսում կերպավորական իմաստներ արտահայտող այս բայերի՝ նախադասության մեջ ինքնուրույն անդամի դերով հանգես գալու, ուստի և ինքնուրույնաբար գործողության իմաստը ներկայացնելու դեպքերի մասին, որոնք բացառված չեն մեր լեզվում (ինչպես՝ «Մենք ժողովն սկսեցինք ժամը 6-ին», «Նա շարունակում է իր ուսուցչի գործը», «Աղմուկը դադարեց» և այլն): Նման դեպքերում նրանք մյուս բոլոր բայերի պես ստեղծում են սովորական անզամագատ բառակապակցություններ: Իմաստի դժգունացումով, ստորոգումային կառույցներում կերպավորական նշանակությամբ կտրող են հանդես գալ և այլ բայեր, ինչպես՝ փորձել, պատրաստվել և այլն (մոտավորապես՝ սկսելու իմաստով):

Վերը ցույց տրված կերպավորական կառույցների կապակցությամբ չենք ուզում անտեսել մի իրողություն՝ ես: Ինչ խոսք, այսպիսի կերպավորությունն իր շրջանակներում հանդես է գալիս որոշակի յուրահատկությամբ և այդպիսով հատուկ տեղ է զբաղում լեզվի կերպավորության ընդհանուր կարգի մեջ: Սակայն նկատելի է, որ այն կարող է հանդես գալ կերպավորական այլ երեւույթների համատեղումներով: Մեր լեզվում անսովոր չեն այսպիսի գործածություններ՝ «Երևիսն սկսեց թռչկոտել (կամ՝ վազվզել...)», «Երևիսն շարունակում էր թռչկոտել», «Երևիսն դադարեց թռչկոտել»: Թռչկոտել բայն ունի բազմապատկանության կերպիմաստ, բայց ակնհայտ է, որ մի այլ (շահաշյուսական) մակարդակում այն ըստ հաղորդվող մտքի պահանջի ստորոգումային կառույցներում լրացուցիչ կերպով ստացել է նաև կերպավորական այլ իմաստներ: Հմտ. նաև՝ «...Շարունակում էր գոռգոռալ, վազվզել...» (Շիրվանդադե, Եժ, էջ 386): Համատեղումներ կարող են լինել նաև վերլուծական այլևայլ կերպավորումների հետ, ինչպես՝ «Սկսեց... խփել հստ խփել» (Նար-Դոս, Ե, հ. 2, էջ 542):

Շատ հազվադեպ պատահում է, երբ սկսել բայը կերպավորող դեր է կատարում շարունակել բայի համար: Օրինակ՝ Նար-Դոսը գրում է. «Սկսեց շարունակել... հողվածը» (հ. 1, էջ 186): Սա, իհարկե, խրախուսելի չէ:

Մեր լեզվի համար կերպավորական իմաստներից են գործողության կրկնությունը, բազմապատկությունը, հաճախ սրանց ուղեկցվող կամ հենց բացահայտ գերակշռությամբ հանդես եկող անընդհատականությունը և այլն: Այսպիսի իմաստներ կարող են արտահայտվել նաև վերլուծաբար: Շարահյուսական մակարդակում այսպիսի վերլուծական կերպավորությունը հանդես է գալիս բայական պարզ ստորոգյալի կրկնությամբ: Ժամանակակից հայերենում նման կրկնությամբ արտահայտվում են բազմազան նշանակություններ⁸, սակայն մենք այդ բոլորն այստեղ նկատի չունենք, այլ՝ միայն այնպիսիները, որոնք կերպավորական են:

Հիշյալ կերպավորական իմաստներն արտահայտելիս դիմավոր բայ-ստորոգյալը կարող է կրկնվել կա՛մ միայնակ, կա՛մ այլևայլ օժանդակ բառերի հավելմամբ: Նախ վերցնենք առանց հավելման կրկնության օրինակներ: «Հանկարծ բանալին անհայտացավ: Ո՞վ տարավ, ո՞րտեղ կորավ, — մինչև այսօր մտածում եմ, մտածում և ոչնչով բացատրել չեմ կարողանում» (Բաֆֆի, Ե,

⁸ Տե՛ս Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 109—111:

հ. 2, էջ 348): «Բայց որ դուանը մոտենում էինք, թափում էինք, թափում, ոչ ոք չէր ուղղում բաց անել» (նույն տեղում, էջ 360): «Նա... ողորդեց, ողորդեց օղու շիշը, հետո դլիխն քաշեց և սկսեց ծծել» (Նար-Ռոս, հ. 1, էջ 52): «Պատ-րիկյանը նորից կանգ առավ, մտածեց, մտածեց, հետո գրիչը վար դրեց և ասաց...» (նույն տեղում, էջ 182): «Քրտինքը հեղեղում էր ստեղծագործողի ջերմ ճակատը, նա հեռում էր և գրում, գրում» (Դ. Դեմիրճյան, Ե, հ. 2, էջ 432):

Ժամանակակից գրական լեզվում կերպավորական կրկնությունը սովորաբար երկանդամ է լինում, բայց հանդիպում են նաև բազմանդամ (այս դեպքում էլ՝ մեծ մասամբ եռանդամ) կրկնություններ: Այսպես. «Նա շարում էր, շարում, շարում» (Դ. Դեմիրճյան, «Հանգստի տանը»): «Մեր այգու դուռն մոտով գնում է մի ջինջ առու... Դնում է, գնում, գնում, խառնվում Որոտանին» (Հ. Սահյան) և այլն: Այսպիսի կրկնությունը, իհարկե, ինքնաբերական չէ: Դրանով ափսոսելի է ընդգծվում կերպավորական նշանակությունը:

Կերպավորական նշանակությունների առավել ընդգծման ուրիշ միջոցներ էլ կան: Դրանցից մեկը հնչերանգն է: Հմմտ. «Շաքլն ուսերին գնում-գալիս էր պատշգամբում և մտածում, մտածում...» (Ստ. Զորյան, ԵԺ, հ. 1, Երևան, 1960—1964, էջ 445): Կերպավորական նշանակությունները ընդգծվում են նաև կրկնության շրջանակներում հանդես եկող որոշ ուղեկցող բառերով (չենք խոսում պարագաների մասին): Այդպիսի բառ է հա-ն, որը ծառայում է հաճախական, տեական և նման այլ նշանակությունների դրսևորման ընդգծմանը: Օրինակներ՝ «Մայիսի գլուխը միշտ կախ, կարում էր հա կարում...» (Նար-Ռոս, Ե, հ. 1, էջ 51): «Այդ սարսափելի ժխորի մեջ Հոպոպը վաղում էր հա վազում կնոջ հետևից...» (նույն տեղում, էջ 62) և այլն:

Հաճախ կրկնության մեջ միավորում է կատարվում ու շաղկապով, որը նույնպես նպաստում է կերպավորական համապատասխան իմաստների ընդգծմանը: Օրինակներ՝ «Միքայելը նայում էր ու նայում երկար ժամանակ-ով այդ համառ հայացքներն սկսում էին հալածել Շուշանիկին» (Շիրվանզադե, ԵԺ, հ. 4, էջ 281): «Քաշված մի անկյուն՝ ծխում էի ու ծխում, ջա-նալով ո՛չ լսել նվագը, ո՛չ գիտել պարը...» (Ա. Իսահակյան, ԵԺ, հ. 3, Երևան, 1950—1951, էջ 202): «Եվ տեսիլների միջից սթափվում էր Ադամ սրտի կսկի-ծով և խենթի պես վազում էր ու վազում...» (նույն տեղում, էջ 318) և այլն: Հազվադեպ հանդիպում է միավորում և շաղկապով, ինչպես՝ «Սակայն սառնա-շունչ քամին շաշում էր և շաշում էր, շաշում» (նույն տեղում, էջ 248):

Հատկապես ժողովրդական գործածությամբ որոշ կարգի հաջադրական բայերով արտահայտված բայ-ստորոգյալի կերպավորական կրկնության դեպքում երբեմն կրկնվում է ոչ թե բայական ամբողջ հաջադրությունը, այլ՝ նրա մի կազմիչ մասը: Այսպես. «Նստած եմ մի օր ու միտք եմ անում. Միտք եմ աճում, միտք ու չեմ կարենում Մի հնար գտնեմ՝ ցավերս հոգամ» (Հ. Թումանյան, ԵԺ, հ. 3, Երևան, 1950—1959), «էս աղվեսը գնում է, էդ երկրի թագավորի աղբանոցում ման է գալի, ման, մի ոսկի է գտնում» (նույն տեղում, հ. 3, էջ 144): «(Աղվեսը) վազ է տալի, վազ, տեսնում է մի դաշտում մեծ նախիր է արածում» (նույն տեղում, էջ 146) և այլն: Այստեղ էլ նկատվում է որոշ օրինակաբանություն. կրկնվում է ոչ թե բայ հաջադրություն, այլ՝ մյուսը՝ որի միջոցով արտահայտվում է բառի բուն արմատական իմաստը (մեր օրինակներում՝ միտք, ման, վազ, մտիկ):

Շարահյուսական մակարդակում բայ-ստորոգյալը կարող է հանդես գալ նույն արմատի կրկնությունը կազմված համադրական կրկնավոր բայի զուգակցությամբ, ինչպես՝ «Երկար, շատ երկար զոռաց, զոռզոռաց Դավիթը, հայհոյեց, էլ մեռել ու կենդան ըթողեց...» (Նար-Դոս, Ե, հ: 1, էջ 50), նման կրկնությունների բնույթի որոշման մեջ էական նշանակություն ունի առաջին բառից հետո եկող արտասանական յուրահատուկ դադարը, իսկ դրություն մեջ՝ տրոհումը ստորակետով, առանց որոնց կունենալինք բառալին միություններ:

Բառային մակարդակում վերլուծական կերպավորությունն արտահայտվում է բառերի վերլուծական կազմություններով (հարադրություններով): Այս դեպքում գործ ենք ունենում բայական հարադրությունների հետ: Ըստ որում կարող են տարբեր լինել թե՛ բառային միավորումների տեսակները և թե՛ նրանց արտահայտած կերպավորական նշանակությունները: Նման դեպքերում իշխում են բաղմապատկականությունը, կրկնական ինտենսիվությունը: Այդպիսի նշանակությունների արտահայտումով ընդունվում են հետևյալ տիպերի բայական հարադրությունները՝ ա) պարզ բայը հարադրվում է նույն արմատով կազմված կրկնավորին, որով և ընդգծվում է համադրական կրկնավորով արտահայտվող իմաստը, ինչպես՝ «Անանդան... դողաց-դողդողաց...» (Ա. Իսահակյան, «Անանգան և մահը»), «Երբ Մինասն ամեն ինչ պատրաստեց՝ սայլը կապեց-կապկպեց թոկերով...» (Ստ. Զորյան, «Ցանկապատ») և այլն⁹, բ) կրկնաձայն համակցական հարադրություններով, որտեղ անվանական կրկնավոր մասը հարադրվում է բայական մասին, ինչպես՝ կտոր-կտոր անել՝ լինել, պատառ-պատառ անել՝ լինել, ծվեն-ծվեն անել՝ լինել, բզիկ-բզիկ անել՝ լինել և այլն: Այս վերջին դեպքում կերպավորական նշանակության իշխում է բառական իմաստը, սակայն չի կարելի չնկատել կերպավորականը:

Կան զուգաբայական հարադրություններ, որտեղ կազմիչ բայերից մեկը իր բառային իմաստով ամբողջ միավորման մեջ բերում է գործողության ավարտունության կամ վախճանականության գաղափար: Խոնարհման ժամանակ այդ նշանակությունը հանդես է գալիս ոչ միայն այն ժամանակաձևերում, որոնք ընդհանրապես ավարտունության նշանակություն չեն ունենում, այլև այնպիսիներում, որոնք կատարյալության իմաստ ունեն: Վերջին դեպքում հավելյալ կերպով ընդգծվում է ավարտունությունը: Դա, անշուշտ, կերպավորական իմաստ է: Բառային այդպիսի միություններում հատկապես ժողովրդական կերպարությամբ հանդես է գալիս պրծնել բայը, ինչպես՝ ուտել-պրծնել (ուտեմ-պրծնեմ, կերա-պրծա, կերել-պրծել եմ...), շինել-պրծնել, գրել-պրծնել, ցանել-պրծնել, իմել-պրծնել և այլն: Դրան գրական տեսք տալու համար գրողները երբեմն պրծնել կազմիչ մասը փոխարինում են վերջացնել բայով, ինչպես՝ «Ու երբ ամեն բան դիտեց-վերջացրեց, դարձավ հորս...» (Ստ. Զորյան, ԵԺ, հ. 1, Երևան, 1960—1964, էջ 185): «Պետական մթերումները ճանձնել-վերջացրել էին» (Ս. Խանզադյան, «Հողը», հ. 2, էջ 209) և այլն:

Վերլուծական կերպավորության մեջ պետք է ներառել նաև զուգաբայական այնպիսի հարադրությունները, որտեղ հատուկ հարադրվող մասով

⁹ Հմմտ. նաև մեր «Բայը ժամանակակից հայերենում», գիրք առաջին, Երևան, 1962, էջ 196—197:

(սովորաբար՝ մնալ բայով) ընդգծվում է կայունությունը, մնալուն վիճակը¹⁰, Այսպես. «Կանգնեց-մնաց՝ դեմքից քաշած ոսկեկարած խասը ձեռին» (Ե. Չաբենց, ԵԺ, հ. 1, Երևան, 1962, էջ 223): Այսպիսի կազմությունները համատարած չեն, սահմանափակ բնույթ են կրում՝ կապված բայերի բառային յուրահատուկ իմաստների հետ:

Պետք է նաև ընդգծել, որ ցույց տրված դեպքերով չեն սպառվում կերպավորական կարգի միջմակարդակային բնույթի նշանակություններն ու արտահայտության միջոցները: Դրանք լրիվ կլինեին, եթե ներկայացնեին բոլոր նշանակությունները՝ համապատասխան բոլոր ձևերով: Այստեղ խոսեցինք միայն կիրառական-շարահյուսական և բառային-բառակազմական հոգի վրա ստեղծվող վերլուծական դրսևորումների մասին:

ОПЫТ ХАРАКТЕРИСТИКИ НЕКОТОРЫХ АНАЛИТИЧЕСКИХ ПРОЯВЛЕНИЙ АСПЕКТУАЛЬНОСТИ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

А. А. АБРААМЯН

Доктор филологических наук

Р е з ю м е

В современном армянском языке существует категория аспектуальности, связанная с глаголом. В плане содержания она охватывает такие значения, которые характеризуют глагольное действие. В плане выражения имеются разнообразные проявления этой категории, присущие некоторым уровням языка — лексическому, морфологическому и синтаксическому. Особый интерес представляет аналитическое выражение аспектуальных значений в современном армянском языке.

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 194—195: